# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ XXIV ՏԱՐԵԴԱՐՁԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՌՔԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ

## ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ, ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՄԱՐ

*Արտասահմանյան հայերը մեծ խանդավառությամբ տոնեցին Հայաստանում Սովետական իշխանության հաստատման XXIV տարեդարձը*

### ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐ

Հայաստանում Սովետական իշխանության հաստատման 24-րդ տարեդարձի առթիվ Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության Նախագահ ընկ. Մ. Պապյանի անունով արտասահմանյան հայերից և հայրենասիրական հայ կազմակերպություններից ստացվել են ողջույնի հետևյալ հեռագրերը.

### ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

Հայ ազգային խորհուրդը, որը ներկայացնում է Ամերիկայի կազմակերպությունների բոլոր հայրենասերներին, իր սրտագին շնորհավորանքն է հղում Սովետական Իշխանության հաստատվելու այս երջանիկ 24-րդ տարեդարձի առթիվ:

Միացյալ Նահանգների ավելի քան 40 քաղաքներում և օկրուգներում— մենք չափազանց երջանիկ ենք, որ Սովետական Հայաստանը քաջարի Կարմիր Բանակի կողմից փրկված է ավերածություններից: Մենք հպարտ ենք, որ Հայաստանի զավակները հերոսաբար մասնակցում են Կարմիր Բանակի հաղթական գործողություններին ՍՏԱԼԻՆԻ ռազմական մեծ ղեկավարությամբ: Ամերիկյան հայերի զավակները նույնպես արիաբար կմարտնչեն նույն նպատակով մեր մեծ պրեզիդենտ Ֆրանկլին Ռուզվելտի ղեկավարությամբ, մինչև առաջիկա արագ, լիակատար հաղթանակը:

ՕԳՍԵՆ ՍԱՐՅԱՆ
ՊԵՏՐՈՍ ԹԵՐԶՅԱՆ

### ՂԱԶՎԻՆԻՑ

Ղազվին քաղաքի հայկական գաղութը շնորհավորում է Գերագույն Սովետին, Հայաստանի բոլոր աշխատավորներին և ռազմաճակատի հերոսներին՝ Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի արժանավոր հաջորդներին՝ Հայաստանում սովետական իշխանության հաստատման 24-րդ տարեդարձի առթիվ:

Ղազվինի հայկական գաղութը, ինչպես նաև արտասահմանյան ամբողջ հայ գաղութը, խորապես հավատում է, որ նոյեմբերի 29-ը իրագործեց բազմատանջ հայ ժողովրդի դարավոր իղձերը, տալով նրան ազատ կյանք և կուլտուրապես առաջադիմելու լիակատար հնարավորություն:

Ղազվինի հայկական գաղութը ողջունում է բոլոր ճնշված ժողովուրդների ազատարար Կարմիր Բանակին, ինչպես նաև հերոսաբար մարտնչող

մեր հայ եղբայրներին, որոնք պայքարում են նրա շարքերում գերմանական զավթիչների դեմ։

Կեցցե՛ Սովետական Միությունը և նրա հանճարեղ առաջնորդ Կարմիր Բանակի Գերագույն Գլխավոր Հրամանատար Մարշալ ՍՏԱԼԻՆԸ։

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՏԵՐ-ՄԵՍՐՈՊՅԱՆ, ՎԱՐԴԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ, ԱՇՈՏ ՄԵԼԻՔՅԱՆ, ՄԿՐՏԻՉ ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍՅԱՆ, ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ, ԶԻՎԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ, արտիստ ՍԱՐԳԻՍ ՍՎԱՐՉԱԼ, ՀԵՐՈՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ, ՄԱՐՏԻՆ ԱՂՊԱՆԴՅԱՆ, ԳՐԻԳՈՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## ՌՈՒՄԻՆԻԱՅԻՑ

Ռումինիայի հայկական գաղութը, որը բաղկացած է 25 հազար հայից, Ձեզ, ազատ Սովետական Հայաստանի գերագույն օրգանի ղեկավարին, իր եղբայրական ողջույնը և շնորհավորանքն է հղում Սովետական Հայաստանի 24-րդ տարեդարձի առթիվ։

Մենք հպարտ ենք, որ հաղթական Կարմիր Բանակի շարքերում ռուս մեծ ժողովրդի և ՍՍՌՄ-ի մյուս ժողովուրդների զավակների հետ միասին մարտնչում են նաև Սովետական Հայաստանի անվեհեր զավակները՝ Սասունցի Դավթի սերունդը՝ գեներալներ, սպաներ ու զինվորներ, որոնց հետ այստեղ Ռումինիայի տերիտորիայում տեղի ունեցած հանդիպումը հպարտությամբ և հիացմունքով լցրեց մեր սրտերը։

Սա է գերմանական ֆաշիզմի դեմ վերջնական հաղթանակ տանելու ժամը։ Մենք անհամբեր սպասում ենք այն ժամին, երբ մեզ հայրենի հողից հեռացած աշխատավոր հայերիս ևս հնարավորություն կընձեռվի մեր ավանդը մուծելու մեր սիրելի և թանկագին հայրենիքի հետագա բարգավաճման գործում։

Կեցցե՛ ժողովուրդների կամքով ստեղծված հզոր Սովետական Միությունը։

Կեցցե՛ Սովետական Հայաստանը։

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

## ԼԱՐՆԱԿԻՑ

Էնտուզիաստների հայկական ակումբը շնորհավորում է Սովետական Հայաստանի 24-րդ տարեդարձը և իր սրտագին շնորհավորանքն է հղում հայրենիքին։

ՔԱՐՏՈՒՂԱՐ ՀԱԿՈԲ ՉԱԽԱՃՅԱՆ

## ԵՐԵԿՈՒՅԹ ԹԱՎՐԻԶՈՒՄ

Թավրիզում լույս տեսնող «Հակաֆաշիստ» թերթը հաղորդում է, որ 1944 թվի նոյեմբերի 29-ին տեղի է ունեցել Թավրիզի Հայ կուլտուրական ընկերության ժողով՝ նվիրված Հայաստանում Սովետական իշխանության հաստատման 24-րդ տարեդարձին։

Ֆիրդուսու անվան դպրոցում հավաքվել էր ավելի քան հազար մարդ։

Դահլիճը զարդարված էր հայերեն, պարսկերեն և ռուսերեն գրված լոզունգներով՝ «Կեցցե՛ Հայաստանում Սովետական իշխանության հաստատման 24-րդ տարեդարձը», «Կեցցե՛ Կարմիր Բանակը», «Կեցցե՛ Իրանի և ՍՍՌՄ-ի ժողովուրդների բարեկամությունը» և այլն:

Բեմի կենտրոնում դրված էին ընկեր ՍՏԱԼԻՆԻ մեծադիր նկարը, ինչպես նաև ընկ. ընկ. ԿԱԼԻՆԻՆԻ և ՄԻԿՈՅԱՆԻ նկարները:

Ժողովը բացեց արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանը: Նա իր ներածական ճառում ասաց, որ Հայաստանում Սովետական իշխանության հաստատումը հայ ժողովրդին փրկեց ֆիզիքական բնաջնջումից: Նա նշեց Սովետական իշխանության տարիներին Հայաստանում ձեռք բերված բացառիկ նվաճումները, մանավանդ գիտության և լուսավորության ասպարեզում: Սովետական Հայաստանը իր նվաճումների համար պարտական է ռուս մեծ ժողովրդին:

Գեներալ-նահանգապետության անունից ողջույնով հանդես եկավ Իլ-խամին, որն առանձնապես նշեց իրանական ժողովրդի բարեկամությունը հայ ժողովրդի հետ:

Հայաստանում Սովետական իշխանության հաստատման 24-րդ տարեդարձին նվիրված զեկուցումով հանդես եկավ Հակոբյանը:

Զեկուցումից հետո ելույթ ունեցավ հայկական ընկերության վարչության անդամ Գևորգյանը:

Ողջույնի խոսք ասաց բանաստեղծ Բիրյան: «Սովետական Հայաստանը», ասաց նա, «Հոկտեմբերյան ռևոլյուցիայի զավակն է: Հայ ժողովուրդը մեր հարևանն է, մենք միշտ բարեկամական ենք ապրել նրա հետ և Իրանի ոչ մի ռեակցիոն ուժ ի վիճակի չէ խանգարել մեր բարեկամությունը»: Բանաստեղծի այս խոսքերը ընդունվեցին ժողովականների բուռն ծափահարություններով: Ի վերջո Բիրյան կարդաց «Ողջույն քեզ, Հայաստան» իր բանաստեղծությունը:

Ժողովականները հաճախ խանդավառ բուռն օվացիաներ էին սարքում ի պատիվ ընկեր ՍՏԱԼԻՆԻ, Կարմիր Բանակի և Սովետական Միության:

Ժողովը միահամուռ ոգևորությամբ որոշում ընդունեց ողջույնի հեռագիր ուղարկել Հայաստանի կառավարությանը:

Ողջույնի հեռագրում ասված է.— «Ատրպատականյան բոլոր հայերը, այդ թվում նաև Իրանում ապրող հայերը, հիացած են այն վերելքով, որը ունեցավ Սովետական Հայաստանի ժողովուրդը 24 տարվա ընթացքում: Ոգևորված այդպիսի էլ ավելի գեղեցիկ հեռանկարով, մենք պատրաստ ենք բուռն ցանկությամբ աջակցել մեր սիրելի Հայաստանի հետագա առաջխաղացմանն ու բարգավաճմանը»: Հեռագիրը վերջանում է հետևյալ խոսքերով. «Կեցցե՛ Հայաստանում Սովետական իշխանության հաստատման 24-րդ տարեդարձը», «Կեցցե՛ Հերոսական Կարմիր Բանակը և նրա հանճարեղ առաջնորդ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Մարշալ ՍՏԱԼԻՆԸ»:

Ժողովից հետո տեղական հայ ընկերության և սովետական գաղութի ուժերով տեղի ունեցավ մեծ համերգ:

(«Սովետական Հայաստան»)